

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է Երևանի Աջափնյակ համայնքի Արա Սարգսյան 5/1 հասցեում տեղակայված շենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի նոյեմբերի 19-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 պայմանագրում 2021 թվականի մարտի 19-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

1) Փոփոխության առաջացման պատճառ

Ծառայության մատուցման ժամկետի երկարաձգման անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն

Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման վերջնական կետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով:

Փոփոխության հիմնավորում

Պայմանագրի 7.5 և 7.6 կետեր:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

19.11.2020թ. կնքված N ՀՀԲԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 գնման պայմանագրի

ք. Երևան

19.03.2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Վ. Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով Երևանի Աջափնյակ համայնքի Արա Սարգսյան 5/1 հասցեում տեղակայված շենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 19.11.2020թ. կնքված N ՀՀԲԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին

ա) Պայմանագրում ծառայության մատուցման ժամկետին վերաբերող բոլոր տեղերում <<91>> թիվը փոխարինել <<121>> թվով:

բ) Պայմանագրի N 1.1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 2 (երկու) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 9000000361700

Հ/Հ 02565827

Գլխավոր քարտուղար



ԿԱՏԱՐՈՂ՝

ՀՀ ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ>> ՍՊԸ
ք. Երևան, Արմյան 29 շ., 15 բն.

ՀՀ ԷՎՈԼՅԱՆՔԱՆԿՔ ՓԲԸ

Հ/Հ 16600057361700

ՀՎՀՀ 01553657

Տնօրեն՝


(ստորագրություն) Վ. Սարգսյան



19.03.2021թ. կնքված N3 համաձայնագրի

<<Հավելված N 1.1
19.11.2020թ. կնքված

Օրացուցային գրաֆիկ

Երևանի Աջափնյակ համայնքի Արա Սարգսյան 5/1 հասցեում տեղակայված շենքի վերակառուցման նախագծման նախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության

[illegible]

